ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՅԻՍ 2005)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

Տնտեսական աճ

2005թ. հունվար-մայիսին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 8.5%: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 3.6 տոկոսային կետ), շինարարության (2.3) և զուտ անուղղակի հարկերի (1.3) աճով:

ՀՆԱ դեֆլյատորը 2005թ. հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 106.2%:

Գնաճ

Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2005թ. մայիսին սպառողական գների ընդհանուր մակարդակն աճել է 0.1%-ով ընդ որում՝ պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպաստումը գնաճին կազմել է համապատասխանաբար -0.02, -0.05 և 0.18 տոկոսային կետ:

2004թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական գների աճը կազմել է 2.9%: 2005թ. մայիսին, 2004թ. մայիսի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 100.3%, իսկ 2005թ. հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 102.9%:

Բնականոն գնաճը 2005թ. մայիսին, նախորդ ամսվա համեմատությամբ, կազմել է -0.08%, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ՝ -0.02%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 0.43%, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ՝ -0.74%:

Արտաքին հատված

2005 թ. հունվար-մայիսին ապրանքների արտահանումը (FOB գներով) կազմել է 344.4 մլն ԱՄՆ դոլար. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 28.2 %-ով: Արտահանման աճը հիմնականում պայմանավորվել է արտահանման մեջ 32.9 % կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 39.8 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 183.4 % և 17.4 % աճով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները հաշվի առնելու՝ արտահանումն աճել է 36.5 %-ով:

Ներմուծումը (CIF գներով) կազմել է 650.4 մլն ԱՄՆ դոլար. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 27.0 %-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալները հաշվի առնելու՝ ներմուծումն աճել է 26.1%-ով: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորվել է ներմուծման մեջ 24.3% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», 10.8% կազմող «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և 8.0 % կազմող «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար 29.7%, 53.8% և 68.9% աճով:

Արդյունքում՝ 2005թ. հունվար-մայիսին առևտրային հաշվեկշռի պակասուրդը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 25.6 %-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ 16.7%-ով) և կազմել 305.9 մլն ԱՄՆ դոլար:

Պետական հատված

Մայիսին ևս պահպանվել է բյուջեի եկամուտների, հատկապես հարկային եկամուտների ծրագրված մակարդակների՝ տարեսկզբից դրսևորված գերակատարման միտումը: Եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 26.4 մլրդ դրամ՝ ծրագրված 25.3 մլրդ դրամի փոխարեն. հարկային եկամուտները կազմել են 24.4 մլրդ դրամ՝ ծրա-

գրված 23.3 մլրդ դրամի փոխարեն, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտների փաստացի ցուցանիշը համապատասխանել է ծրագրայինին՝ 2.0 մլրդ դրամ: Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են մոտ 1.2 մլրդ դրամ (առաջին եռամսյակում՝ 1.0 մլրդ դրամ, ապրիլին՝ 1.3 մլրդ դրամ, նախորդ տարվա մայիսին՝ 1.1 մլրդ դրամ):

Մայիսին հարկերի հավաքագրումը փոքր-ինչ անհամաչափ բնույթ է ունեցել: Ամսվա վերջին երեք օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա հարկերի 16.2 տոկոսը՝ առաջին եռամսյակի միջին 19.7 տոկոսի և ապրիլի 12.6 տոկոսի փոխարեն:

Բյուջեի ծախսերը մայիսին կազմել են 30.3 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 31.0 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում՝ պակասուրդը կազմել է 3.9 մլրդ դրամ, որը ձևավորվել է արժեթղթերի տեղաբաշխումից ստացված 1.9 մլրդ դրամ զուտ մուտքերի և ՀՀ ԿԲ-ում կառավարության միջոցների՝ 2.0 մլրդ դրամով նվազման հաշվին: Ընդ որում, ամսվա ընթացքում ՀՀ կառավարության ավանդներն ավելացել են 2.2 մլրդ դրամով, իսկ Գանձապետարանի միասնական հաշվում պետբյուջեի միջոցները նվազել են 4.2 մլրդ դրամով:

Դրամավարկային քաղաքականություն

Ելնելով այն հանգամանքից, որ 2005 թվականը առանձնանում է դրամայնացման ակտիվ գործընթացով և դրանով պայմանավորված՝ անցած 4 ամիսների ընթացքում դրամի նկատմամբ պահանջարկը զգալի ավելացել է, մայիսին ևս ՀՀ ԿԲ-ն ծրագրել էր դրան համապատասխան ապահովել առավել մեծ փողի առաջարկ, քան նախատեսված էր տարեկան ծրագրի ամսական համամասնությամբ՝ 122.4 մլրդ դրամ:

Ծրագրված սցենարի իրագործման արդյունքում փողի բազան մայիսին ավելացել է 7.4 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 137.8 մլրդ դրամ՝ գերազանցելով տատանման թույլատրելի միջակայքի վերին սահմանը շուրջ 13.0 մլրդ դրամով:

Փողի առաջարկի աճն ամսվա ընթացքում ապահովվել է 1.9 մլրդ դրամով ԿԲ ՋԱԱ-ի և 5.5 մլրդ դրամով՝ ՁՆԱ-ի ավելացման հաշվին:

Ֆինանսական ներհոսքով և դրամայնացման երևույթով պայմանավորված՝ մայիսին ևս ԿԲ-ն արտարժույթի շուկայում իրականացրել է արտարժույթի գնման գործառնություններ՝ 4.1 մլրդ դրամի: Ընդ որում, 1.3 մլրդ դրամը գնվել է մայիսի 31-ին և բանկերի կողմից փոխանցված արտարժույթի հաշվապահական ձևակերպման մեկ օրվա լագի պատճառով չի արտացոլվել ԿԲ ՋԱԱ շարժերում, այլ հաշվառվել է ԿԲ զուտ այլ ակտիվներում՝ որպես դեբիտորական պարտք: Արդյունքում՝ ԿԲ ՋԱԱ-ն արտարժույթի գնման հաշվին համալրվել է 2.8 մլրդ դրամով, իսկ զուտ այլ ակտիվներն ավելացել են 1.7 մլրդ դրամով: Միևնույն ժամանակ, ՋԱԱ-ն նվազել է 800 մլն դրամով՝ Կառավարության արտաքին պարտքի սպասարկման և այլ փոխարկումների հետևանքով:

ՁՆԱ կառուցվածքում, բացի զուտ այլ ակտիվների ցուցանիշից, փոփոխվել է նաև ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը՝ աճել է 4.0 մլրդ դրամով՝ հիմնականում Կառավարության իրականացրած հարկաբյուջետային քաղաքականության և ՊՊ լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցները ԿԲ-ում ավանդադնելու՝ իրացվելիության կարգավորման համատեղ գործիքի կիրառման արդյունքում:

Բացի արտարժույթի առքի վերոնշյալ գործառնություններից, հիմնականում վերաձևակերպվել են նախորդ ամսում կիրառված գործիքների մարումները: Արդյունքում՝ ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշը նվազել է ընդամենը 147 մլն դրամով: Այսպես, ամսվա ընթացքում բանկերի կողմից ԿԲ-ում ավանդադրվել են 7.3 մլրդ դրամ համախառն ծավալով միջոցներ՝ 7.8 մլրդ դրամ մարման պարագայում, ինչպես նաև ԿԲ կողմից բանկերի հետ կնքվել է 2.0 մլրդ դրամ ծավալով հակադարձ ռեպո գործառնություն՝ 1.4 մլրդ դրամի մարման դիմաց: Ընդ որում, ավանդային մշտական հնարավորության գործիքի զուտ մարման արդյունքում իրացվելիության ներարկումն հիմնականում չեզոքացվել է հակադարձ ռեպոյի միջոցով զուտ ներքաշմամբ:

Պահպանվել են կանխիկի հանդեպ պահանջարկի աճի բարձր տեմպերը: ԿԲ-ից դուրս կանխիկն ավելացել է 4.6 մլրդ դրամով, որի պատճառը, ինչպես և նախորդ ամիսներին, հիմնականում դրամայնացման բարձր մակարդակն է և դրանով պայմանավորված՝ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իրականացրած առքի գործառնությունները:

Բավականին մեծ է եղել նաև ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվների միջոցների աճը՝ 2.6 մլրդ դրամ, որն առավելապես ամսվա վերջին օրը Կառավարության անկանխիկ ծախսումների և ԿԲ կողմից գնված արտարժույթի հետևանք էր:

Բանկային համակարգի կողմից տնօրինվող դրամային ավելցուկը մայիսին ավելացել է և կազմել 8.0 մլրդ դրամ (նախորդ ամսվա միջին ամսականը՝ 6.4 մլրդ դրամ), որը նաև բարձր ցուցանիշ է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի (4.1 մլրդ դրամ) համեմատ:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) մայիսին ավելացել է 7.3 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 289.6 մլրդ դրամ: Ամսվա ընթացքում շարունակվել են շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամով ավանդների աճի միտումները՝ համապատասխանաբար 3.5 մլրդ դրամ կամ 3.5% և 2.1 մլրդ դրամ կամ 3.8% (փետրվար-ապրիլին՝ միջին ամսական 6.3% և 4.7%): Արդյունքում՝ դրամային զանգվածն ամսվա ընթացքում ավելացել է 5.6 մլրդ դրամով և կազմել 160.5 մլրդ դրամ: Նախորդ ամիսների նվազման (միջին ամսական 2.7%) փոխարեն արտարժութային ավանդները մայիսին ավելացել են շուրջ 1.3%-ով կամ 1.6 մլրդ դրամով: Ընդ որում, դրա հիմնական մասը՝ 1.4 մլրդ դրամը, բաժին է ընկել ժամկետային ավանդներին:

Մայիսի վերջի դրությամբ փողի և դրամային բազմարկիչների մակարդակները կազմել են համապատասխանաբար 2.1՝ նախորդ ամսվա 2.16-ի և 1.17՝ 1.19-ի փոխարեն, որոնց վրա հիմնականում գերակշռել է կանխիկի փոփոխության ազդեցությունը:

ՊՊ առաջնային շուկայում գրանցվել է տոկոսադրույքների որոշակի աճ, մասնավորապես՝ կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ ամսվա համեմատ աճել է 0.83 տոկոսային կետով՝ կազմելով 4.92%, իսկ միջնաժամկետ մասնակի մարումներով պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է 0.31 տոկոսային կետով՝ կազմելով 4.95%: Տեղաբաշխվել է նաև 5 տարի ժամկետայնությամբ միջնաժամկետ պարտատոմսերի 1 թողարկում՝ 6.68%-ով:

Արժութային շուկայում առքի և վաճառքի ծավալները համապատասխանաբար կազմել են 117.588 մլն և 114.315 մլն ԱՄՆ դոլար, իսկ միջին կշռված փոխարժեքը՝ 449.41 դրամ, որը նախորդ ամսվա միջին փոխարժեքի համեմատ արժեզրկվել է 0.52%-ով: 2005թ. հունվար-մայիսին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 464.8 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեքավորվելով 17.2%-ով: Մայիսին դոլարի միջին փոխարժեքը կազմել է 445.1 դրամ՝ նախորդ ամսվա նկատմամբ արժեքավորվելով շուրջ 0.6%-ով: Այդուհանդերձ, մայիսին տեղի է ունեցել փոխարժեքի կտրուկ տատանում՝ մասամբ պայմանավորված «Արժութային վերահսկողության և կարգավորման մասին» ՀՀ նոր օրենքի պահանջով ԱԺ կողմից պետբյուջեի հաստատագրված վճարները միայն դրամով սահմանելու հանգամանքով (1 ԱՄՆ դոլարը՝ 500 դրամ): Ձևավորված արժեզրկման արհեստական սպասումները մեկ օրում կտրուկ արժեզրկեցին դրամը, որը, բնականաբար, խիստ կարճաժամկետ երևույթ էր: Հաջորդ օրը փոխարժեքի բնականոն վարքագիծը արդեն վերականգնվեց, որով հիմնավորվեց այն փաստը, որ տնտեսավարող սուբյեկտները չպետք է առաջնորդվեն պահային և կարճաժամկետ կանխատեսումներով: Սպասումները պետք է ձևավորել երկարատև և հիմնավոր միտումների հիման վրա:

2005թ. հունվար-մայիսին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը եվրոյի նկատմամբ կազմել է 605.5 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեքավորվելով 12.3 %-ով: Մայիսին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 571.3 դրամ՝ նախորդ ամսվա նկատմամբ արժեքավորվելով 1.4%-ով:

Ինչպես և նախորդ ամիսներին, մայիսին նույնպես ՀՀ ԿԲ-ն հանդես է եկել դրամային, մասնավորապես՝ հակադարձ ռեպո գործառնությունների իրականացման հայտարարությամբ: Մայիսին ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվել է 2,008 մլն դրամի հակադարձ ռեպո գործարք՝ սահմանված 3.75% եկամտաբերությամբ: Մայիսին ՀՀ ԿԲ կողմից ներգրավվել է նաև 7,250 մլն դրամի ավանդ՝ սահմանված 1.75 դրույքաչափով:

ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները մայիսին չի փոփոխել: Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվել է 17%:

I. Իրական հատված

Անվանում	*2005թ. հունվար – ապրիլ*	*2005 թ. հունվար – ապրիլի իրական աճի ինդեքսը 2004 թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*	*2005 թ. հունվար – մայիս*	*2005 թ. հունվար – մայիսի իրական աճի ինդեքսը 2004 թ. հունվար – մայիսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	358362.6	108.0	499090.8	108.5
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	106.1		106.2
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	326.5	108.8	452.5	109.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	194084.3	102.6	246032.8	104.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	2378.8	107.3	2904.6	106.9
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	55845.7	101.7	76730.6	102.8
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	220297.3	104.0	285417.0	104.4
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	37758.3	126.0	68042.8	131.1
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	367759.4	108.3[1]	476702.3	109.6[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	367836.0	104.1[1]	472218.7	105.3[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	47912	118.8[1]	48557[2]	119.6[1,2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1203.8		1208.2	
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	106.2		105.2	
Գործազրկության մակարդակը *(%)*	8.8		8.7	

II. Արտաքին հատված

Անվանում	*2005 թ. հունվար – ապրիլ* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2005 թ. հունվար – ապրիլը 2004 թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*	*2005 թ. հունվար – մայիս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2005 թ. հունվար – մայիսը 2004 թ. հունվար – մայիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	275.2	130.8	344.4	128.2
Ներմուծում *(ՍԻՖ)*	514.2	129.8	650.4	127.0
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	239.0	128.6	305.9	125.6

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	105.4	100.5	100.7	98.2
Փետրվար	99.3	94.8	99.9	98.4
Մարտ	99.1	101.2	122.9	99.6
Ապրիլ	99.1	97.4	99.9	97.3
Մայիս	100.1	99.9	100.0	97.6
2005 թ. հունվար – մայիսը 2004 թ. հունվար – մայիսի համեմատությամբ	102.9	113.1	113.7	105.6

IV. Գնաճ

** Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:*

Ժամանակաշրջան	*2003*	*2004*	*2005*	*2005*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.1	2.5	5.4	5.4
Փետրվար	-1.5	-0.6	-0.7	4.7
Մարտ	-0.5	0.3	-0.9	3.7
Ապրիլ	2.0	1.2	-0.9	2.8
Մայիս	1.2	1.1	0.1	2.9
Հունիս	1.4	-0.1		
Հուլիս	-5.5	-2.5		
Օգոստոս	-2.3	-2.4		
Սեպտեմբեր	2.5	-0.7		
Հոկտեմբեր	-0.1	0.1		
Նոյեմբեր	2.2	0.8		
Դեկտեմբեր	5.2	2.3		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	8.6	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	4.7	7.0		

V. Բնակառնո գնաճի փոփոխությունները [1]

Ցուցանիշ	**2003**	**2004**	**2005**
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.69	0.65	0.71
Փետրվար	-0.46	0.05	-0.37
Մարտ	0.00	0.03	-0.26
Ապրիլ	0.23	0.05	-0.26
Մայիս	0.06	0.04	-0.08
Հունիս	0.61	-0.13	
Հուլիս	-0.55	-0.50	
Օգոստոս	-0.18	-0.31	
Սեպտեմբեր	1.20	-0.30	
Հոկտեմբեր	0.04	-0.16	
Նոյեմբեր	0.94	-0.05	
Դեկտեմբեր	2.07	0.30	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.16	4.45	0.72
Փետրվար	0.86	5.60	1.07
Մարտ	1.04	6.37	0.71
Ապրիլ	0.37	6.39	0.13
Մայիս	0.49	6.23	-0.74
Հունիս	2.44	5.41	
Հուլիս	2.26	6.71	
Օգոստոս	2.61	6.90	
Սեպտեմբեր	5.33	6.02	
Հոկտեմբեր	4.65	5.67	
Նոյեմբեր	4.23	4.39	
Դեկտեմբեր	4.67	0.55	

VI. Բնակառնո գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները [1]

Անվանում	***Նպաստումը բնակառնո գնաճին, տոկոսային կետ***
նախորդ ամսվա նկատմամբ	
Բնակառնո գնաճ. *այդ թվում*	**-0.08**
ձու	-0,03
կարտոֆիլ	-0,02
հաց առաջին տեսակի	-0,02
պանիր չանախ	-0,01
բուսական յուղ-արևածաղկի	-0,01
կարագ	-0,01
հաց բարձր տեսակի	-0,01
մածուն	-0,01
թարմ կաթ	-0,01
պանիր կովի կաթից - տնական	-0,01

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:
[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ [1]

(մլն ՀՀ դրամ)


Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[3]
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական արժե-կտրոնային պարտատոմսեր	ընդամենը	կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՕԻԳ-երի միջոցներ դրամով	ՕԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը		
2004										
Դեկտեմբեր [4]	193	5711	5904	42512	126	0	97	42735	**-36830**	***-36815***
2005										
Հունվար	193	5658	5852	63919	124	0	97	64141	**-58289**	***-58268***
Փետրվար	193	5598	5792	64629	122	0	98	64849	**-59057**	***-59162***
Մարտ	193	5526	5719	65220	119	90	99	65528	**-59809**	***-60054***
Ապրիլ	193	6783	6977	71670	114	35	98	71917	**-64941**	***-65255***
Մայիս	193	6543	6736	67461	115	29	100	67706	**-60969**	***-61476***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ [2]	ԿԲ պարտավորությունները Կառավարության նկատմամբ	Ընդամենը
2004			
Դեկտեմբեր	12221	42735	54956
2005			
Հունվար	15029	64141	79170
Փետրվար	17396	64849	82245
Մարտ	15408	65528	80936
Ապրիլ	15917	71917	87834
Մայիս	17012	67706	84718



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի, ինչպես նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [4]	Հ – 05	Փ – 05	Մ - 05 [4]	Ա – 05	Մ - 05
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***149266***	***160018***	***165260***	***171489***	***180578***	***182491***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-17216***	***-42573***	***-48403***	***-47871***	***-50196***	***-44718***
Կառավարություն	-36830	-58289	-59057	-59809	-64941	-60969
Բանկեր	10857	9653	5100	5064	8339	8192
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	1157	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-2000	-700	-6600	-4100	-2000	-1500
Հակադարձ ռեպո (-)	0	-1347	0	-2536	-1361	-2008
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	8757	6063	5554	6874	6406	8059
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***129830***	***117152***	***119542***	***123374***	***129198***	***137449***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***132050***	***117444***	***116857***	***123618***	***130382***	***137773***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	105534	91268	92635	98827	105457	110017
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	25800	25604	23700	23834	24338	27195
Այլ հաշիվներ	716	572	521	957	586	561
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	561	529	507	588	578	561
Այլ հաշիվներ (արտարժույթով)	155	43	14	369	8	0
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***10752***	***5242***	***6229***	***9089***	***1913***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-25357***	***-5829***	***532***	***-2326***	***5478***
Կառավարություն	-	-21459	-768	-752	-5132	3972
Բանկեր	-	-1204	-4553	-36	3275	-147
այդ թվում՝ ավանդներ (-)	-	-1300	5900	-2500	-2100	-500
Զուտ այլ ակտիվներ	-	-2694	-508	1320	-468	1653
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-12679***	***2390***	***3832***	***5824***	***8251***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-14606***	***-587***	***6761***	***6764***	***7391***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-14265	1367	6192	6630	4560
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-196	-1904	134	505	2857
Այլ հաշիվներ	-	-144	-51	436	-371	-25
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-33	-21	81	-10	-17
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-112	-29	355	-361	-8
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***7.2***	***3.3***	***3.8***	***5.3***	***1.1***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-147.3***	***-13.7***	***1.1***	***-4.9***	***10.9***
Կառավարություն	-	-58.3	-1.3	-1.3	-8.6	6.1
Բանկեր	-	-11.1	-47.2	-0.7	64.7	-1.8
Զուտ այլ ակտիվներ	-	-30.8	-8.4	23.8	-6.8	25.8
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-9.8***	***2.0***	***3.2***	***4.7***	***6.4***
ՓՈՂԻ ԲԱԶԱ [4]	***-***	***-11.1***	***-0.5***	***5.8***	***5.5***	***5.7***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.5	1.5	6.7	6.7	4.3
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-0.8	-7.4	0.6	2.1	11.7
Այլ հաշիվներ	-	-20.2	-8.8	83.6	-38.8	-4.3

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՀ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՀ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

[4] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04	Հ – 05	Փ – 05	Մ –05	Ա - 05	Մ - 05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**55829**	**56969**	**53242**	**50846**	**44797**	**43228**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	117646	117724	113184	107917	99969	101800
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-57154	-56395	-56223	-53699	-50917	-53614
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-4663	-4360	-3719	-3373	-4255	-4958
ԶՆԱ	**130829**	**130156**	**129619**	**135579**	**139351**	**144583**
Կառավարություն	19598	20248	18730	24151	27842	28571
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	20989	24849	25598	25777	22542	26514
Պահուստային ակտիվներ	34083	36625	37449	37707	34319	38370
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-13094	-11776	-11851	-11930	-11777	-11856
Տնտեսություն	142426	136997	136586	141043	143390	150247
Ջեռնարկություններ	80113	75460	72354	73767	75828	78213
Դրամով	27361	24391	24240	24542	26419	27473
Արտարժույթով	49224	47601	48094	49206	49389	50721
Արժեթղթեր	3529	3468	20	20	19	19
Տնային տնտեսություններ	56001	55202	57624	60323	62354	66074
Դրամով	14325	13445	13999	15426	17122	18152
Արտարժույթով	41676	41757	43625	44897	45232	47921
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29	38	44
Դրամով	25	25	22	19	23	29
Արտարժույթով	17	21	10	10	15	15
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170	5916
Դրամով	2042	1984	2522	3082	2019	3360
Արտարժույթով	4227	4305	4054	3843	3152	2557
Այլ ռեզիդենտներ[1]	0	0	1	0	0	0
Դրամով	0	0	0	0	0	0
Արտարժույթով	0	0	1	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-52183	-51938	-51296	-55392	-54423	-60749
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	1836	1572	1604	1600	1289	1343
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	3052	2249	2279	1785	2804	2073
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-799	-656	-857	-796	-1189	-887
Ներդրումներ փայաբաժիններում	445	445	445	457	459	470
Միջբանկային պահանջներ	6097	4139	3242	3721	10616	12318
Այլ ակտիվներ	32887	33359	36639	39005	41313	42027
Միջբանկային պարտավորություններ	-5530	-3617	-2793	-3265	-10156	-11498
Դրամական շուկայի գործիքներ	-3406	-3371	-3335	-3207	-3091	-3150
Կապիտալ հաշիվներ	-68842	-68635	-70214	-73661	-76607	-79060
Այլ պարտավորություններ	-17924	-17423	-18305	-21031	-19861	-24386
ԱՎԱՆԴՆԵՐ	**186659**	**187126**	**182861**	**186424**	**184148**	**187812**
Դրամով ավանդներ	46588	47838	49712	53477	56067	58176
Ցպահանջ ավանդներ	33283	32250	35629	36675	38203	40048
Ժամկետային ավանդներ	13304	15588	14083	16802	17864	18127
Ավանդներ արտարժույթով	140071	139288	133149	132947	128080	129636
Ցպահանջ ավանդներ	74453	71481	66296	69120	64726	64956
Ժամկետային ավանդներ	65618	67807	66853	63827	63354	64680

[1] *Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ջեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:*

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [5]	Հ – 05	Փ – 05	Մ – 05 [5]	Ա - 05	Մ - 05
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)						
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***205095***	***216987***	***218502***	***222334***	***225375***	***225720***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***80848***	***52841***	***49899***	***56461***	***57900***	***64680***
Կառավարություն	-17232	-38041	-40327	-35659	-37099	-32398
Տնտեսություն	142469	137037	136622	141075	143419	150274
Չեռնարկ. և կազմակերպ.	80114	75460	72355	73767	75828	78213
որից՝ կուտակված տոկոսներ	651	637	565	667	667	714
Տնային տնտեսություններ	56044	55241	57659	60354	62383	66100
որից՝ կուտակված տոկոսներ	790	854	880	945	954	1057
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29	38	44
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170	5916
որից՝ կուտակված տոկոսներ	48	36	36	42	27	28
Զուտ այլ ակտիվներ	-44388	-46154	-46395	-48955	-48420	-53196
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [2]	***145538***	***130296***	***135012***	***145246***	***154908***	***160536***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	***285172***	***269000***	***267511***	***277883***	***282339***	***289595***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [3]	***285943***	***269828***	***268401***	***278796***	***283275***	***290399***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	98569	82131	85019	91415	98541	102027
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [4]	33845	32778	36136	37263	38781	40610
կուտակված տոկոսներ	38	41	53	43	49	33
ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	13304	15588	14083	16802	17864	18127
կուտակված տոկոսներ	142	160	173	191	230	194
Արտարժույթով ավանդներ	140226	139331	133163	133316	128088	129636
Ցպահանջ [4]	74607	71525	66310	69489	64733	64956
կուտակված տոկոսներ	52	55	65	51	60	36
ժամկետային	65618	67807	66853	63827	63354	64680
կուտակված տոկոսներ	539	573	599	627	597	541
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***11892***	***1515***	***3832***	***3040***	***345***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-28007***	***-2942***	***6562***	***1439***	***6780***
Կառավարություն	-	-20809	-2286	4668	-1440	4701
Տնտեսություն	-	-5432	-415	4453	2344	6855
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-4654	-3105	1413	2061	2385
որից՝ կուտակված տոկոսներ	-	-15	-72	102	0	47
Տնային տնտեսություններ	-	-802	2418	2695	2028	3718
որից՝ կուտակված տոկոսներ	-	64	25	65	10	102
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	4	-15	-3	9	6
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	20	287	348	-1754	746
որից՝ կուտակված տոկոսներ	-	-12	0	6	-15	1
Զուտ այլ ակտիվներ	-	-1766	-241	-2560	535	-4776
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ	***-***	***-15242***	***4716***	***10234***	***9662***	***5628***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	***-***	***-16173***	***-1488***	***10372***	***4456***	***7256***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ	***-***	***-16115***	***-1427***	***10395***	***4479***	***7125***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16438	2889	6395	7126	3486
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-1067	3358	1127	1518	1828
կուտակված տոկոսներ	-	3	12	-10	6	-15
ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	2284	-1505	2720	1062	263
կուտակված տոկոսներ	-	18	13	18	39	-35
Արտարժույթով ավանդներ	-	-894	-6168	153	-5228	1548
Ցպահանջ	-	-3083	-5215	3179	-4755	222
կուտակված տոկոսներ	-	2	10	-13	9	-24
ժամկետային	-	2188	-953	-3027	-472	1326
կուտակված տոկոսներ	-	34	26	28	-30	-56

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***5.8***	***0.7***	***1.8***	***1.4***	***0.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-34.6***	***-5.6***	***13.2***	***2.5***	***11.7***
Կառավարություն	-	-120.8	-6.0	11.6	-4.0	12.7
Տնտեսություն	-	-3.8	-0.3	3.3	1.7	4.8
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-5.8	-4.1	2.0	2.8	3.1
Տնային տնտեսություններ	-	-1.4	4.4	4.7	3.4	6.0
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	10.0	-32.1	-8.1	31.0	16.6
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	0.3	4.6	5.3	-25.3	14.4
Զուտ այլ ակտիվներ	-	-4.0	-0.5	-5.5	1.1	-9.9
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.5***	***3.6***	***7.6***	***6.7***	***3.6***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	-	***-5.7***	***-0.6***	***3.9***	***1.6***	***2.6***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.6***	***-0.5***	***3.9***	***1.6***	***2.5***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16.7	3.5	7.5	7.8	3.5
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-3.2	10.2	3.1	4.1	4.7
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	17.2	-9.7	19.3	6.3	1.5
Արտարժույթով ավանդներ	-	-0.6	-4.4	0.1	-3.9	1.2
Ցպահանջ	-	-4.1	-7.3	4.8	-6.8	0.3
Ժամկետային	-	3.3	-1.4	-4.5	-0.7	2.1

[1] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):
[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):
[4] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:
[5] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [4]	Արտարժույթով ավանդներ	M2X [5]
2004							
Դեկտեմբեր	98569	33807	132376	13162	145538	139634	285172
2005							
Հունվար	82131	32738	114869	15428	130296	138703	269000
Փետրվար	85019	36083	121103	13910	135012	132499	267511
Մարտ	91415	37220	128635	16611	145246	132637	277883
Ապրիլ	98541	38733	137273	17635	154908	127431	282339
Մայիս	102027	40576	142603	17933	160536	129059	289595


ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [2]


(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [4]	Արտարժույթով ավանդներ	M2X [5]
2004							
Դեկտեմբեր	98569	33845	132414	13304	145718	140226	285943
2005							
Հունվար	82131	32778	114909	15588	130497	139331	269828
Փետրվար	85019	36136	121156	14083	135238	133163	268401
Մարտ	91415	37263	128678	16802	145480	133316	278796
Ապրիլ	98541	38781	137322	17864	155187	128088	283275
Մայիս	102027	40610	142636	18127	160764	129636	290399


[1] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:
[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:
[3] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):
[4] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:
[5] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն ՀՀ դրամ
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
65
60
55
50
45
40
35
30
25
99
00
01
02
03
04
05


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
95
90
85
80
75
70
65
60
99
00
01
02
03
04
05


Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
02
03
04
05
Փողի բազա
Գնաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը
%
15
10
5
0
-5
-10
02
03
04
05
Փողի զանգված
Գնաճ


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2004					
Դեկտեմբեր	118742	87328	120859	135356	274203
2005					
Հունվար	116919	80711	112024	127674	264176
Փետրվար	120171	86956	124686	137967	272280
Մարտ	127999	93709	133916	149487	281344
Ապրիլ	134550	102563	143076	159872	292963
Մայիս	141412	106066	146487	163066	296774

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բաճքերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների սեզոնայնորեն հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակնե



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները




Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	2004	2005				
	Դ[3]	Հ	Փ	Մ	Ա	Մ
Կենտրոնական բանկի ԶԱԱ	149266	160018	165260	171489	180578	182491
Առևտրային բանկերի ԶԱԱ	55829	56969	53242	50846	44797	43228
Ընդամենը	205095	216987	218502	222334	225375	225720
Կենտրոնական բանկի ԶԱԱ [2]	***150341***	***161160***	***166382***	***172394***	***181915***	***184411***



[1] *ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:*

[2] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

[3] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05	Ա - 05	Մ - 05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	**-983**	**-1101**	**-943**	**-851**	**-853**	**-1481**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	331	229	119	160	168	209
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-1314	-1329	-1062	-1010	-1021	-1691
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-	-	-	-	-	-
ԶՆԱ	**1373**	**1451**	**1373**	**1280**	**1308**	**2036**
Կառավարություն	-107	-103	-102	-99	-96	-97
Ջուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	1059	1157	1001	756	612	899
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	1363	1459	1301	1052	922	1139
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-304	-302	-300	-296	-310	-240
Տնտեսություն	3622	3494	3829	3997	4077	4380
Ձեռնարկություններ	1815	1581	1688	1697	1699	1924
Դրամով	773	557	550	543	537	552
Արտարժույթով	1042	1025	1138	1154	1163	1372
Արժեթղթեր	-	-	-	-	-	-
Տնային տնտեսություններ	1781	1891	2120	2155	2235	2315
Դրամով	755	709	730	755	828	850
Արտարժույթով	1026	1182	1390	1400	1407	1465
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	26	22	21	20	17	16
Դրամով	2	2	2	1	1	1
Արտարժույթով	24	20	19	18	16	15
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-	-	125	125	125
Դրամով	-	-	-	125	125	125
Արտարժույթով	-	-	-	-	-	-
Այլ ռեզիդենտներ	-	-	-	-	-	-
Դրամով	-	-	-	-	-	-
Արտարժույթով	-	-	-	-	-	-
Ջուտ այլ ակտիվներ	-3201	-3097	-3355	-3373	-3286	-3145
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	-	1	6	7	12	15
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-	-	-
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-	-	-
ՀՀ դրամ դրամարկղում	26	42	35	21	7	37
Ներդրումներ փայաբաժիններում	-	-	-	-	-	-
Պահանջներ վարկային կազմակերպություններին	-	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	487	492	469	453	392	602
Պարտավորություն. վարկային կազմակ.-ներին	-	-	-	-	-	-
Դրամական շուկայի գործիքներ	-	-	-	-	-	-
Դրամաշնորհներ	-94	-93	-130	-125	-119	-132
Կապիտալ հաշիվներ	-3106	-3371	-3605	-3545	-3433	-3500
Այլ պարտավորություններ	-514	-166	-130	-184	-144	-167
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**390**	**350**	**430**	**430**	**455**	**555**
Դրամով փոխառություններ	9	-	-	7	28	28
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	9	-	-	7	28	28
Արտարժույթով փոխառություններ	382	350	430	423	427	527
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	382	350	430	423	427	527

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [3]	Հ - 05	Փ - 05	Մ – 05 [3]	Ա - 05	Մ - 05
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	**204112**	**215886**	**217559**	**221484**	**224521**	**224238**
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	149266	160018	165260	171489	180578	182491
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	55829	56969	53242	50846	44797	43228
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-983	-1101	-943	-851	-853	-1481
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**80833**	**52896**	**50032**	**56766**	**58378**	**65640**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	***-17339***	***-38144***	***-40429***	***-35758***	***-37194***	***-32495***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-36830	-58289	-59057	-59809	-64941	-60969
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	19598	20248	18730	24151	27842	28571
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-107	-103	-102	-99	-96	-97
Պահանջներ տնտեսությանը	***145787***	***140228***	***140150***	***144776***	***147186***	***154414***
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	43	40	36	32	29	27
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	142122	136695	136286	140747	143080	150007
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	3622	3494	3829	3997	4077	4380
Այլ ակտիվներ (զուտ)	***-47615***	***-49188***	***-49690***	***-52252***	***-51614***	***-56279***
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**284945**	**268782**	**267591**	**278250**	**282899**	**289878**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	98543	82089	84985	91393	98534	101989
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	33793	32709	35840	37068	38619	40479
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	13060	15501	13995	16714	17775	18047
Արտարժույթով ավանդներ	139159	138133	132340	132645	127515	128808
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	390	350	430	430	455	555
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)						
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	**-**	**11774**	**1673**	**3925**	**3038**	**-283**
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	-	10752	5242	6229	9089	1913
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	-	1140	-3727	-2396	-6049	-1568
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-	-118	158	92	-3	-628
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	**-27937**	**-2864**	**6734**	**1612**	**7263**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	**-**	***-20805***	***-2285***	***4671***	***-1436***	***4699***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-	-21459	-768	-752	-5131	3972
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր) [2]	-	650	-1517	5420	3691	729
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-	4	1	3	4	-2
Պահանջներ տնտեսությանը	**-**	***-5559***	***-78***	***4626***	***2410***	***7228***
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	-	-4	-4	-4	-3	-2
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	-	-5427	-409	4462	2332	6927
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	-	-129	335	168	80	303
Այլ ակտիվներ (զուտ)	**-**	***-1573***	***-502***	***-2563***	***638***	***-4665***
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**-**	**-16163**	**-1191**	**10659**	**4649**	**6979**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-16454	2895	6409	7141	3455
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	-	-1084	3132	1227	1551	1860
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	2441	-1506	2719	1062	272
Արտարժույթով ավանդներ	-	-1026	-5793	304	-5130	1293
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	-	-41	80	-1	25	100

[1] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, իսկ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

[3] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2004	2005				
	Դ [4,5]	Հ	Փ	Մ [4]	Ա	Մ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	547.8	561.9	570.4	579.3	593.1	588.7
Համախառն միջազգային պահուստներ	575.9	572.1	580.6	589.5	603.3	598.9
Ոսկի	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	12.0	11.7	6.7	6.6	0.9	0.9
Արտարժույթ [2]	563.9	560.4	574.0	583.0	602.5	598.0
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [3]	550.0	564.3	572.9	581.5	596.2	593.0


[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

[5] ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2004 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է տարեվերջի ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2004[3]	2005				
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ
Վարկեր [1]						
Իրավաբանական անձանց						
ՀՀ դրամով	18.8	12.2	20.3	17.8	18.4	18.6
ԱՄՆ դոլարով	16.9	11.5	14.2	13.9	11.7	15.0
Ֆիզիկական անձանց						
ՀՀ դրամով	22.0	21.7	21.7	22.0	20.5	23.8
ԱՄՆ դոլարով	24.3	24.3	24.3	23.8	23.7	23.7
Ավանդներ [1]						
Իրավաբանական անձանցից						
ՀՀ դրամով	2.8	7.5	8.3	7.3	6.4	6.5
ԱՄՆ դոլարով	5.3	5.8	3.8	5.6	3.3	6.0
Ֆիզիկական անձանցից						
ՀՀ դրամով	6.3	7.2	7.3	7.8	6.5	6.4
ԱՄՆ դոլարով	5.8	6.1	4.7	3.8	5.2	4.6
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	3.75	4.5	4.5	3.75	3.75	3.75
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	1.0	1.75	1.75	1.75	1.75	1.75
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	5.6	6.0	4.6	4.6	5.3	4.9
Գնաճ	2.0	5.4	-0.7	-0.9	-0.9	0.1

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[1] Ներկայացված են 91 - 180-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Գնաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05	Ա -05	Մ - 05
1	500.05	-	477.61	471.00	457.30	-
2	499.19	-	473.16	470.70	-	439.25
3	497.87	-	478.13	470.50	-	439.17
4	-	486.05	474.87	470.25	457.30	441.11
5	-	486.05	-	470.05	456.60	443.94
6	493.87	-	-	-	454.46	459.39
7	487.89	488.75	474.35	-	453.31	-
8	484.89	493.37	474.05	-	452.23	-
9	478.00	-	473.55	470.05	-	-
10	478.00	495.01	473.02	469.35	-	459.03
11	-	497.39	474.91	469.35	452.23	457.13
12	-	499.67	-	-	451.56	455.83
13	478.00	501.20	-	-	451.56	454.69
14	483.44	501.80	473.77	469.06	450.56	-
15	483.44	-	473.26	469.06	450.02	-
16	484.34	-	472.61	468.43	-	453.03
17	484.64	500.21	471.61	468.23	-	452.87
18	-	499.45	473.45	467.31	448.02	452.14
19	-	497.38	-	-	443.77	450.91
20	484.64	493.43	-	-	445.25	449.30
21	484.75	488.97	472.68	466.11	445.25	-
22	484.97	-	472.57	464.83	443.75	-
23	483.83	-	472.26	462.77	-	448.85
24	483.92	487.20	471.76	461.60	-	447.85
25	-	484.07	471.22	460.39	442.29	446.91
26	-	482.34	471.22	-	440.89	446.10
27	484.37	481.07	-	-	439.31	446.06
28	485.57	-	471.22	459.20	439.41	-
29	486.23	-	-	457.75	439.25	-
30	485.84	-	-	458.13	439.25	445.55
31	-	478.48	-	458.13	-	445.08
ժամանակահատվածի վերջ	485.84	478.48	471.22	458.13	439.25	445.08
ժամանակահատվածի միջին	486.26	491.68	473.39	466.01	447.89	449.25






ՀՀ ԴՐԱՄ / ԵՎՐՈ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05	Ա - 05	Մ - 05
1	664.82	-	622.56	624.40	592.84	-
2	663.62	-	616.39	622.08	-	569.14
3	662.86	-	624.49	616.40	-	564.90
4	-	661.22	617.38	618.10	592.62	567.09
5	-	649.65	-	616.47	588.24	575.04
6	656.85	-	-	-	582.16	595.09
7	655.48	646.32	614.66	-	582.96	-
8	652.47	651.25	608.87	-	584.42	-
9	635.74	-	604.44	616.47	-	-
10	635.98	653.41	603.67	626.39	-	594.31
11	-	651.73	606.79	629.35	579.71	587.59
12	-	656.72	-	-	585.72	587.20
13	630.53	658.53	-	-	586.35	580.68
14	641.43	663.98	609.03	629.29	582.21	-
15	643.80	-	613.68	627.23	576.93	-
16	648.19	-	615.15	626.90	-	572.40
17	649.47	654.82	614.98	626.16	-	571.34
18	-	653.53	617.43	625.17	576.51	571.32
19	-	649.58	-	-	575.44	569.09
20	642.83	645.55	-	-	578.65	568.01
21	648.50	632.53	616.33	618.95	581.01	-
22	649.57	-	616.94	613.53	579.45	-
23	647.56	-	623.05	609.70	-	565.87
24	651.16	631.56	622.86	602.39	-	561.96
25	-	632.44	624.84	597.68	578.38	563.87
26	-	628.25	624.84	-	571.66	560.48
27	655.93	625.63	-	-	570.27	558.60
28	656.83	-	620.36	596.13	567.72	-
29	662.88	-	-	594.25	566.85	-
30	661.13	-	-	592.18	566.85	557.96
31	-	623.27	-	592.96	-	555.10
ժամանակահատվածի վերջ	661.13	623.27	620.36	592.96	566.85	555.10
ժամանակահատվածի միջին	650.80	645.79	616.13	614.64	579.41	571.29



ՀՀ ԴՐԱՄ / ՌԴ ՌՈՒԲԼԻ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 04	Մ - 05	Ա - 05	Մ - 05
1	17.76	-	17.01	17.00	16.42	-
2	17.82	-	16.92	16.99	-	15.82
3	17.78	-	17.10	16.99	-	15.81
4	-	17.52	16.95	16.96	16.40	15.85
5	-	17.52	-	16.94	16.37	15.98
6	17.68	-	-	-	16.27	16.53
7	17.52	17.61	16.95	-	16.26	-
8	17.40	17.78	16.86	-	16.22	-
9	17.09	-	16.80	16.99	-	-
10	17.05	17.84	16.81	17.03	-	16.52
11	-	17.92	16.91	17.09	16.22	16.45
12	-	17.87	-	-	16.25	16.39
13	17.00	17.98	-	-	16.26	16.32
14	17.19	18.01	16.88	17.08	16.21	-
15	17.27	-	16.88	17.07	16.17	-
16	17.35	-	16.87	17.04	-	16.22
17	17.41	17.90	16.84	17.03	-	16.16
18	-	17.86	16.91	17.02	16.06	16.14
19	-	17.69	-	-	15.95	16.10
20	16.99	17.52	-	-	16.04	16.07
21	17.38	17.36	16.92	16.96	16.06	-
22	17.39	-	16.92	16.91	16.02	-
23	17.38	-	16.97	16.78	-	16.05
24	17.39	17.30	16.95	16.70	-	15.96
25	-	17.28	16.98	16.62	15.95	15.94
26	-	17.24	16.98	-	15.89	15.91
27	17.41	17.12	-	-	15.83	15.89
28	17.48	-	16.97	16.57	15.80	-
29	17.51	-	-	16.45	15.80	-
30	17.51	-	-	16.46	15.80	15.87
31	-	17.09	-	16.46	-	15.84
ժամանակահատվածի վերջ	17.51	17.09	16.97	16.46	15.80	15.84
ժամանակահատվածի միջին	17.40	17.60	16.92	16.87	16.10	16.09



ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ [1]

ժամկետ		1 – 3 ամիս[2] (ներառյալ 91-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2004	Հոկտեմբեր	2000.0	4.0	4.0	4.0	0.0	1.0
	Նոյեմբեր	1500.0	4.0	4.0	4.1	0.1	1.0
2005	Ապրիլ	1000.0	3.8	3.8	3.8	0.0	0.7
	Մայիս	-	-	-	-	-	-

ժամկետ		3 – 6 ամիս[2] (ներառյալ 181-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2002	Հունվար	500.0	14.7	14.7	14.7	0.0	19.3
	Ապրիլ	700.0	13.6	13.6	13.6	0.0	10.0
2005	Հունվար	1500.0	4.3	4.3	4.3	0.0	11.1
	Փետրվար	1000.0	4.2	4.2	4.2	0.0	9.8
	Ապրիլ	1000.0	4.2	4.2	4.2	0.0	1.2
	Մայիս	1477.5	4.9	4.9	4.9	0.03	1.5

ժամկետ		6 - 9 ամիս[2] (ներառյալ 181-օրյա)					
